ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «__» _____ 2015 թ.

«Գլոբալ Ար» ՍՊԸ-ն (գրանցման համար՝ 286.110.855608, վկայականի համար՝ 03Ա1005608, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Բյուզանդի փ. 1/3), այսուհետ՝ Պրինցիպալ, ի դեմս տնօրեն Քրիստինա Հակոբյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ այսուհետ՝ Գործակալ, մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան**

   Գործակալը պարտավորվում է սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան Պրինցիպալի անունից կատարել հաճախորդների գրանցումներ Greencard.am կայքում ԱՄՆ-ում օրինական մշտական բնակչություն հաստատելու՝ Գրինքարտի խաղարկությանը մասնակցելու համար (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Պրինցիպալը պարտավորվում է վարձատրել Գործակալին նրա կատարած աշխատանքի դիմաց սույն պայմանագրի 4-րդ կետով սահմանված չափով, պայմաններով և ժամկետներում:

2. **Պրինցիպալի իրավունքներն ու պարտականությունները**

   2.1. **Պրինցիպալը պարտավորվում է՝**

   2.1.1. Սույն Պայմանագրի ստորագրման օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Գործակալին տրամադրել Ծառայության մատուցման ընթացակարգը, իսկ եթե Գործակալը Պրինցիպալին փոխանցում է 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ դեպոզիտ, ապա նաև Գործակալի հետ անցկացնել հատուկ ուսուցում դիմումները ճիշտ լրացնելու և հաճախորդներին սպասարկելու համար, greencard.am կայքում տեղադրել Գործակալի վերաբերյալ տեղեկություններ և Գործակալի պահանջով նրան տրամադրել վերջինիս կողմից սահմանված պարամետրերով գովազդային նյութերի ձևավորումները:

   2.1.2. Սույն պայմանագրի 4-րդ կետով սահմանված չափով, պայմաններով և ժամկետներում փոխանցել Գործակալին կատարված աշխատանքի դիմաց հասանելիք գումարը:

   2.1.3. Գործակալին գրանցել Greencard.am համակարգում և նրան տրամադրել համակարգ մուտք գործելու համար համապատասխան տվյալները:

   2.1.4. Սույն պայմանագրի 3.1.6 կետում նշված հաշվետվության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում հաշվետվությունը ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում այդ մասին հայտնել Գործակալին: Հակառակ դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

   2.1.5. Խաղարկության ավարտից 2 (երկու) օր առաջ Գործակալին էլեկտրոնային փոստով ծանուցել սույն պայմանագրի գործողության դադարման մասին:

   2.2. **Պրինցիպալն իրավունք ունի՝**

   2.2.1. Պահանջել Գործակալից պատշաճ կատարելու իր կողմից ստանձնած պարտավորությունները:

   2.2.2. Պահանջել Գործակալից ներկայացնել սույն պայմանագրի 3.1.6 կետով նախատեսված խաղարկության գրանցումների հաշվետվություն՝ յուրաքանչյուր գրանցմանը հաջորդող օրվա ընթացքում:

   2.2.3. Գործակալի կողմից սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում լուծել սույն պայմանագիրը:

   2.2.4. Լուծել սույն Պայմանագիրը, այդ մասին **15 (տասնհինգ) օր** առաջ գրավոր ծանուցելով Գործակալին:

3. **Գործակալի իրավունքներն ու պարտականությունները**

3.1. **Գործակալը պարտավորվում է՝**

3.1.1. Պատշաճ կատարել սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

3.1.2. Կատարել սույն պայմանագրի 1-ին կետով նախատեսված խաղարկության գրանցումները սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված կարգով:

3.1.3. Ապահովել գրանցվող դիմումներում լրացված տեղեկատվության ճշգրտությունը:

3.1.4. Սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված խաղարկության գրանցումները կատարելու նպատակով Ծառայության մատուցման վայրում ապահովել համացանցի անխափան առկայությունը:

3.1.5. Պատշաճ տեղեկատվություն տալ հաճախորդին վճարման կարգի մասին ըստ սույն պայմանագրի Հավելված 2-ի:

3.1.6. Յուրաքանչյուր գրանցմանը հաջորդող օրվա ընթացքում Պրինցիպալի պահանջով ներկայացնել կատարված գրանցման հաշվետվությունը:

3.1.7. Սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված խաղարկության գրանցումների համար չգանձել գումար հաճախորդներից:

3.2. **Գործակալն իրավունք ունի՝**

3.2.1. Պահանջել Պրինցիպալից պատշաճ կատարել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները:

3.2.2. Պրինցիպալի կողմից սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում լուծել սույն պայմանագիրը:

3.2.3. Լուծել սույն պայմանագիրը այդ մասին **15 (տասնհինգ) օր** առաջ գրավոր ծանուցելով Պրինցիպալին:

3.2.4. Սահմանել սույն պայմանագրի 3.1.2 կետով սահմանված գրանցումների համար անհրաժեշտ լուսանկարի գինը՝ առավելագույնը 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ չափով:

3.2.5. Ենթագործակալության պայմանագիր կնքել այլ անձի հետ միայն Պրինցիպալի գրավոր համաձայնությամբ:

4. **Վարձատրության չափը եվ վճարման կարգը**

4.1. Գործակալին վճարվելիք գումարը կազմում է Գործակալի կողմից ներգրավվող հաճախորդի կողմից ծառայության դիմաց վճարված գումարի 30 % (երեսուն տոկոս) այն դեպքում երբ Գործակալը Պրինցիպալին սույն Պայմանագրի ստորագրումից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում վճարել է 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ դեպոզիտ, և 20% (քսան տոկոս), այն դեպքում երբ դեպոզիտ չի վճարել:

4.2. Մատուցված ծառայությունների համար սույն պայմանագրի 4.1 կետով նշված գումարը հաշվարկվում և վճարվում է Գործակալին շաբաթական կտրվածքով: Հաշվետու ժամանակահատված է համարվում մեկ շաբաթը:

4.3. Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում մատուցված ծառայությունների համար գումարը հաշվարկվում և վճարվում է Գործակալին մինչև հաջորդող շաբաթվա ավարտը, այն դեպքում երբ Պրինցիպալի կողմից Գործակալին վճարվելիք գումարը գերազանցում է 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամը: 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամը չգերազանցելու դեպքում Գործակալին վճարում չի կատարվում, իսկ հաշվարկված գումարը գումարվում է հաջորդ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում հաշվարկվելիք գումարին:

4.4. Եթե սույն պայմանագրի գործողության ընթացքում մատուցված ծառայությունների համար վճարվելիք գումարը այդպես էլ չի գերազանցում 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամը, ապա Գործակալին հաշվարկված գումարը վճարվում է սույն պայմանագրի գործողության դադարման պահից 1 (մեկ) շաբաթվա ընթացքում:

4.5. Եթե Գործակալն ընտրել է համագործակցության 8.1.1. կետում նկարագրված տարբերակը, ապա առաջին վճարումը կատարվում է Գրինքարտի խաղարկությունը կայանալու մասին ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից պաշտոնական հայտարարության օրվան հաջորդող շաբաթվա ընթացքում, դրան նախորդող ամբողջ ժամանակահատվածի ընթացքում մատուցված Ծառայությունների հաշվարկով:

5. Ֆորս-մաժոր

5.1. Կողմերն ազատվում են իրենց պարտավորությունները մասամբ կամ ամբողջությամբ չկատարելու արդյունքում առաջացած պատասխանատվությունից, եթե չկատարելը հանդիսացել է անհաղթահարելի իրավիճակների հետևանք՝ հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ և Կողմերի հսկողությունից դուրս գտնվող այլ իրավիճակներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից որոշումների, վճիռների, և այլ ակտերի ընդունման դեպքում, որոնք խոչընդոտում են Կողմերի սույն Պայմանագրով իրենց պարտավորությունների կատարմանը:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է մինչև «Գլոբալ Ար» ՍՊԸ-ի կողմից խաղարկության ավարտման մասին խաղարկության ավարտման օրվանից 2 (երկու) օր առաջ Գործակալին էլեկտրոնային փոստով ծանուցելու պահը:

7. Վեճերի լուծում

Սույն Պայմանագրից ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները, որոնք չեն կարգավորվում բանակցությունների և խորհրդատվությունների ուղիով, ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

8. Այլ պայմաններ

8.1. Գործակալը սույն պայմանագրի 3.1.2 կետով նախատեսված գրանցումներն իրավունք ունի կատարել երկու տարբերակով.

8.1.1. Սկսել կատարել գրանցումները նախքան Գրինքարտի խաղարկությունը կայանալու մասին ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից պաշտոնական հայտարարության մասին Պրինցիպալի կողմից Գործակալին էլեկտրոնային փոստով տեղեկացումը: Սակայն խաղարկությունը չկայանալու դեպքում հաճախորդներին վերադարձվում է նրանցից գանձած ամբողջ գումարը: Արդյունքում Պրինցիպալն ու Գործակալը որևէ շահույթ չեն ստանում:

8.1.2. Սկսել գրանցումները Գրինքարտի խաղարկության վերաբերյալ ԱՄՆ պետ դեպարտամենտի կողմից պաշտոնական հայտարարության մասին Պրինցիպալի կողմից Գործակալին էլեկտրոնային փոստով տեղեկացումից հետո: Կատարված աշխատանքի դիմաց Գործակալը վարձատրվում է 4-րդ կետում սահմանված չափով, պայմաններով և ժամկետներում:

8.2. Գործակալի կողմից սխալ լրացված դիմումների համար «Գլոբալ Ար» ՍՊԸ-ն պատասխանատվություն չի կրում:

8.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

8.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերենով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Պրինցիպալ	**Գործակալ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բուզանդի 1/3	Հասցե՝
Բանկ՝ «Առեքսիմբանկ Գազպրոմբանկի Խումբ»	Բանկ՝
հ/հ՝ 2380030754270100	հ/հ՝
Ստորագրություն՝	Ստորագրություն՝